

ցոյց է տուել պառաւին Գ—ի հարուածներէց վիրաւորուած զուխը:

Մի քանի օրից Բ. քահանայի անասուններն էլ են ըսկըսում կոտորուել և սա լսելով պառաւից նրա տեսած երագը, աւելի գօրեց միջոցի է դիմում այդ անկոչ հրեշտակներին իւր գոմից հեռացնելու: Մի մեծ կրակ է վառում զոմի մէջ տեղը, եօթը շամփուր փոփոխակի տաքացնում և կոխում պատերի, առաստաղի ծակերն ու անկիւնները:

Հետեւալ օրը նոյն պառաւը պատմում է, թէ կրկին տեսել էր հրեշտակներին մի ուրիշ գոմ փոխադրուելիս, և թէ զցանցից երկուսը կուրացել էին հնարագէտ քահանայի տաք շամփուրից:

Ս Ր Բ Ե Ր

Մովսէս.—Սա Մինայի լեռան վրայ Աստու հետ խօսելուց յետոյ սաստիկ հպարտացել է, թէ իրենից արժանաւոր մարդ չը կայ աշխարհում, որովհետև ինքը միայն արժանի եղաւ Աստու հետ խօսելու: Քիչ յետոյ սարից իջնելիս ճանապարհը կորցրել է և գնացել իւր ժողովուրդից բաւական հեռացել: Չերզայէս մի ծերունու է պատահել և ասել նըրան. Ես Մովսիսի ժողովուրդից եմ, ցոյց տուր ինձ նրա երկիրը: Ծերունին պատասխանել է, թէ Մովսիսի երկրի մասին առաջին անգամն է լսում, լաւ կանէ որ գնայ իւր մեծ եղբորը հարցնէ, թե՛րես նա զիտենայ: Մովսէսը գնացել է նրա մօտ, սակայն սա ևս ոչինչ լսած չէ եղել: այդ երկրի մասին, ուստի և ուղարկել է ամենամեծ եղբոր մօտ: Եւ երբ Մովսէսը միևնոյն խնդիրը սրան էլ է արել, սա պատասխանել է, թէ Մովսէսի անունը երբէք լսած չէ, սակայն կարող է ամպերից իմանալ: Ապա ցած է կանչել ամպերին և հարցրել է նրանց, թէ ո՞րն է Մովսիսի երկրի վրայ անձրև տեղացնում: Մի փոքրիկ ամպ ասել է, թէ ես եմ տեղում: Այդ ժամանակ ծերունին պատուիրել է այդ ամպին, որ նրան տանի այդ երկիրը:

—Լաւ, պատասխանում է ամօր, թող աշքերը խփէ:

Մոլոէսը խփել է աշքերը, և երբ մի քանի բողկից բայ է արել, տեսել է իւր ժողովուրդի մօտ կանգնած: Այս ժամանակ մի հրեշտակ երևացել է նրան և ասել. «Աստուած պատժեց քեզ հպարտանալուդ համար, նա քեզ մոլորեցրեց, որ տեսնես, թէ քեզանից շատ աւելի արժանաւոր, նոյն իսկ ամպերին հրամայող մարդիկ էլ կան, որոնք, սակայն, չեն հպարտանում:

Նղիա մարզարէ.—Մա մի շատ առարկնի մաշկակար է կղել, որ չը կամենալով կանանց երեսին նայել, մի մեծ ծանր գլակ է ծածկել, որպէսզի երբէք չը կարողանայ վերև նայել, Մակայն մի անգամ սատանան կնոջ կերպարանքով եկել է մաշիկ կարել տալու, փոքրիկ, գեղեցիկ ոտը ցոյց տուել, մի քիչ սիրախօսել. Նղիան բարձրացրել է գլուխը և երեսին նայել, Բայց իսկոյն զգացել է, որ մեղանշեց, ձեռի հերոնը աշքն է խրել, կուրացրել: Բայց նոյն վայրկեանին սատանան անյայտացել է և նա երկինք է համարած:

Աստուածածին.—Գոյս Մարիամը կուժը ուտին դրած ջրի գնալիս մի ձայն է լսել, թէ Մարիամ, քեզանից պիտի ծնուի Քրիստոսը: Մի քիչ յետոյ Մարիամը զգացել է, որ մի քամի ականջից ներս է մտնում և նկատել է, որ որովայնը հեղցահտէ մեծանում է: Մի առ ժամանակից յետոյ Մարիամը տեսել է, որ մի լուսեղէն բոց զուրս եկաւ բերանից, բռնել է, ծղոտով փաթաթեց և դրել մօտը:

Սեզրակ, Միտակ և Յարէթնակովը առանձին առանձին եկել են նրան տեսութեան, սակայն Սեզրակին երևացել է ծերունու, Միտակին միջահասակ, իսկ Յարեթնակովին մի երիտասարդի կերպարանքով:

Յետոյ Մարիամը վերցրել է Յիսուս Էրեխային և գնացել, մի պառաւի տուն իջեանել: Գառաւը սիրով ջուր է տաքացրել և բերել, Էրեխային լողացրել է, և երբ տարել է տաշտի ջուրը թափելու՝ տեսել է, որ թանձրացել, ոսկի է կտրել:

Ս. Նշան. Ա. Նրբ Լեզգինները աւերում կին Լօսին, իրահատցի 75 տարեկան Խուզավէրդի ծերունին փախչում և

ապաստանում է Հաղրատի վանում, Այստեղ տեսնում է, որ մի մեծ, արաստսօր թռչուն եկել, թռաւել է Ս. Նշան եկեղեցու խաչի թաղի վրայ և երեք օր այդպէս կացել: Վանահայրը և դիպացիները զարմացած հարցրել են այդ ծերունի թռչափէրդուն, թէ ինչ պիտի նշանակէ այս թռչունը: Սա էլ պատասխանել է, թէ Լեզգիների աւերած շրջակայ եկեղեցիների զօրութիւնները թռչունի ձեով եկել, իջել են այս եկեղեցու վրայ: Այս օր աւել է, թռչունը դէպի երկինք է սուտանել և անհետացել: Եւ այդ ժամանակից մինչև այժմ էլ ժողովուրդը կարծում է, որ շրջակայ Քորայրի, Ս. Գրիգորի, Սեղուի և այլ աւերակ եկեղեցիների զօրութիւնը Հաղրատի Ս. Նշանի վրայ է անցած:

Բ. Մի անգամ մի քանի հաղրատեցիներ վրացի խոզարածներից 30 խոզ են գողանում: Սրանք դալխս են գողերին բռնում, սակայն երբ վերջիններս իրենց յանցանքը չեն յանձըն առնում, վրացիներն ստիպում են, որ գնան Ս. Նշանը համբուրեն և երգուեն, որ իրենք չեն գողացել: Հաղրատեցիներն ստիպուած դնում են, բայց հէնց որ ներս են մտնում, առաջինը վայր է ընկնում, ուշադնաց լինում և մեռնում: Վերացիները զարհուրած թողնում փախչում են, իսկ հաղրատեցի գողերն սկսում են բղաւել, թէ ուր էք փախչում, մենք ենք գողացել, եկէք, տարէք: Սակայն վրացիները յետ չեն գառնում, այլ բղաւում են, թէ սուրբ Նշանին մատաղ արինք:

Գ. Մի անգամ երբ լեզգիները յարձակուում են հաղրատեցիների վրայ, որ կոտորեն, սրանք տեսնում են, որ յանկարծ Ս. Նշան եկեղեցու դռները բացուեցին և մի գեղին զգեստով եպիսկոպոս դուրս եկաւ և խաչակնքելով հայածեց բոլոր լեզգիներին: Հասկանալով, որ այդ գեղնազգեստ եպիսկոպոսը Ս. Նշանն է եղել, սկսել են նրան «գեղնաթիկուներ» իսկ լեզգիների հալածուած տեղն էլ «յաղթուած փոս» կոչել:

ՕՃԱՆ ՕՃՆՆՑԻ

ՕՃան ՕՃնեցին եւ ապօրինի երեխան.— ՕՃան ՕՃնեցին ապրում էր ՕՃուում, նա իրր կով կթող պահում էր մի այրի կին: Ինչպէս է պատահում, այդ այրի կինը մի սրբի է